

կարծ ժամ մի լռեն»։ Եւ կը պատասխանէ՝ թէ ՅՏ. Մկրտչի գլուխն երբ Հերովդի բազմականաց մէջ բերին, «ամենեքեան սարսեցին եւ լռեցին. եւ այս նշանակ մնաց ամենայն ուրեք» (Հրց. 656)։ Մեզ այս քմածին մեկնութենէն աւելի կարեւոր է տուած տեղեկութիւնը, որ եթէ ոչ հնոց՝ գէթ իւր ժամանակին համար կը զօրէ։ Հոս արուայիկն մեձիս՝ բազմութեամբ հացկերոյթն է, ինչպէս կը կոչէ նաեւ Եզրնկացին Մովսէս (աստ, 141)։ Իսկ «լռեն» բացարձակ իմաստով առնելու չենք անշուշտ, այլ իբր ուտելու եւ ազմկի դադար մ'ընդ մէջ կերակրոյն եւ զինբրբուաց, զուցէ որպէս զի ծառայք սեղանները պատրաստէին այս երկրորդ հանդիսին։ Թերեւս կոչնականաց ծանրաբեռն ստամոքսին հանգիստ մը տալու դիտաւորութիւնն ալ կար այդ «մի ժամուն» մէջ։ Իրաւ է՝ թէ Հոովմայեցիք եւս պահ մը կը լռէին այս տեղ, բայց աստուածոց կարկանդակ ու զինի նուիրելու՝ եւ ապա զինարբուրն սկսելու համար (Գար. Ա, 1281)։ Մեր վանականաց ճաշի նկարագրին մէջ պիտի տեսնենք՝ որ անմոռնչ լռութիւնն անձանօթ էր հին դարերուն նոյն իսկ կրօնաւորաց սեղանին վրայ, թող թէ աշխարհականաց։